ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2025 թվականի N 1729-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 23022024-06-0005 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԿԱՅԱՐԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 90 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0201-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 43-րդ և 42-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, հիմք ընդունելով՝ Ռուզաննա Ռոբերտի Թանդիլյան կողմից լիազորված անձ՝ Ռոզա Գագիկի Թուխտարյանի դիմումը, անձնագրի պատճենները, սեփականության իրավունքի N 23022024-06-0005 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասերի և շինությունների հատակագծերը, բաժանման սխեմաները՝***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամաս, 90 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0201-0015 ծածկագրով գրանցված, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.07 հա մակերեսով հողամասը բաժանել՝ 0.0680 հա և 0.002 հա մակերեսների՝ համաձայն որակավորում ունեցող կազմակերպության կողմից տրված հատակագծերի:

2.Բաժանված՝ 0.002 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և հողամասում առկա ավտոտնակին տրամադրել Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 90/1 փոստային հասցեն, իսկ 0.0680 հա մակերեսով հողամասին և հողամասում առկա բնակելի տան փոստային հասցեն թողնել նույնը՝ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 90 փոստային հասցեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**